ՇԻՐԱԿԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 20-ԱՄՅԱԿԸ

Հոկտեմբերի 20-ին Գյումրիում տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի հիմնադրման 20-ամյակի հանդիսությունը, որին մասնակցում էին ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանը, *ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ակադեմիկոս* Յու. Սուվարյանը, *ՀՀ Շիրակի մարզպետ* Ա. Խաչատրյանը, *Գյումրու փոխքաղաքապետ* Ռ. Սանոյանը, *Շիրակի հոգևոր թեմի առաջնորդ* Մ. եպիսկ. Աջապահյանը, *ակադեմիական հայագիտական ինստիտուտների և բուհերի ղեկավարներ, Գյումրու գիտական մտավորականության բազմաթիվ ներկայացուցիչներ, ասպիրանտներ ու մագիստրոսներ:*

Հոբելյանի առթիվ զեկուցմամբ հանդես եկավ կենտրոնի հիմնադիր տնօրեն, բանասիրության դոկտոր Ս. Հայրապետյանը, *ով հանգամանորեն ներկայացրեց կենտրոնի անցած 20-ամյա ճանապարհը:*

Շիրակի հայագիտական ուսումնասիրության պատմության վերջին ժամանակների մի փոքր հատվածը՝ 20 տարին, անխզելիորեն կապված է նաև ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գործունեության հետ:

Դեռևս անցյալ հարյուրամյակի 70–80-ական թվականներին հանրապետության երկրորդ քաղաքում հասունացած խնդիր էր Գիտությունների ակադեմիայի՝ արդեն գործող երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի կողքին հումանիտար ակադեմիական կառույցի ստեղծումը, ու քաղաքային իշխանությունները գիտության այդ երկու թևերի առկայության մեջ իրավացիորեն տեսնում էին Լենինականում Գիտությունների ակադեմիայի Հյուսիսային բաժանմունքի հիմնադրման ամենահրական հնարավորությունը: Ավելին, խնդիրն արդեն գործնականորեն քննարկվում էր Ակադեմիայի նախագահությունում, ընթացք էին ստացել տեղում Բաժանմունքի համար շինության և նրա ղեկավարության ընտրության հարցերը, այդ մասին սկսել էին խոսել նաև հանրապետական իշխանության ամենավերին օղակներում: Սակայն շուտով՝ 80-ականների կեսերին, հարցը միանգամից գոցվեց, իսկ այդ մասին խոսակցություններն իսպառ լռեցին: Ապա երկիրը հայտնվեց Աղետի հորձանուտում, նրա հյուսիսը՝ Արհավիրքի էպիկենտրոնում՝ բյուրավոր անմեղ զոհերով, ավերակված բնակավայրերով, հարյուր հազարավոր անօթևաններով: Դժնդակ ու նաև հերոսական ժամանակներ եկան, քաղաքական ծանրագույն որոշումների, տնտեսական աննախադեպ ցնցումների, բարդ ու մինչ այդ չտեսնված

հասարակական խմորումների ժամանակներ: Ապա պարտադրված պատերազմ եղավ՝ Արցախյան հերոսամարտը՝ մեր ինքնության ու տեսակի գոյատևման համար: Դժվար է իրարից զատել այդ օրերի ողբերգականը և հերոսականը, նահանջների տագնապն ու հաղթանակների բերկրանքը: Այդպես ապրեցինք, ինչպես սովորել ենք ապրել՝ դարեր շարունակ կուլ չգնալով ո՛չ բնության անսանձ տարերքին, ո՛չ թշնամու կամքին:

Որքան էլ տարօրինակ էր, սակայն, կիսավեր Գյումրիում այդ օրերին նաև հայագիտությունից սկսեցին խոսել և ամենևին՝ ոչ պատահաբար: Երկրագիտական թանգարանի մի խումբ երիտասարդ գիտաշխատողներ 1994-ի խորն աշնանը, ի հեճուկս ամեն տեսակ դժվարությունների, մթի ու ցրտի պայմաններում, անտեսելով բազմապիսի անհարմարությունները, Գյումրի հրավիրեցին հանրապետության բազմաթիվ հայտնի հայագետների՝ քննարկելու Շիրակի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրության վիճակը: Ի մեծագույն պատիվ ու հարգանք հայրենական գիտության մերօրյա մշակներին՝ հանրապետության հայագիտական միտքը մի տեսակ կարոտով ու անչափ ջերմորեն արձագանքեց հրավերին: Գիտաժողովի հաջողությունը եղավ կատարյալ. Գյումրին առաջին հերթին ինքն իրեն, ապա նաև բոլորին ապացուցեց, որ չի մարել իր մեջ ո՛չ գիտության լույսը, ո՛չ էլ հավատը վաղվա օրվա հանդեպ: Անմոռանալի են տեքստիլագործների երբեմնի շքեղ պալատի կիսամութ ու սառը նիստերի դահլիճում այդ օրերին ընթացող գիտական բանավեճերը, վերարկուների մեջ սրթսրթացող, սակայն ցուրտն ու մութն արհամարհած հարյուրավոր մասնակիցների արժանապատիվ պահվածքն ու իրենց արածի կարևորության աներկբա գիտակցումը:

1996-ին գումարված երկրորդ նույնանման գիտաժողովն այլևս որևէ մեկին չզարմացրեց: Նույնիսկ ավելի ներկայացուցչական եղավ. գիտական գնահատանքի ներկայացվեցին առաջին գիտաժողովից հետո հանրապետությունում Շիրակի նյութական ու հոգևոր մասունքների ուսումնասիրության ուղղությամբ նոր ձեռքբերումները: Կարևոր էր նաև այն, որ, բացահայտելով մարզում հայագիտական հետազոտությունների մակարդակը, տեղի գիտական ներուժի իրական հնարավորությունները. այս գիտաժողովներն էականորեն նպաստեցին Գյումրիում ակադեմիական հումանիտար կառույց ունենալու վաղեմի ու չարչրկված հարցի "վերակենդանացմանը": Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունն ըմբռնումով ընդառաջ գնաց մարզային իշխանությունների և քաղաքի մտավորականության խնդրանքին ու հանրապետության մի շարք անվանի գիտնականների (Վ. Բարխուդարյան, Ս. Համբարձումյան, Ա. Քալանթարյան, Լ. Հախվերդյան, Ս. Հարությունյան, Ա. Մելքոնյան, Ն. Հովհաննիսյան և ուրիշներ) միջնորդությանը՝ Կառավարության քննարկմանը ներկայացնելով Գյումրիում հայագիտական կառույց հիմնելու առաջարկը: Կռվանները մի քանիսն էին՝ տեղում գիտական ներուժի (մանավանդ ե-

րիտասարդ կադրերի) առկայությունն ու նրան գործելու, արարելու հնարավորություն ընձեռելը, Շիրակի հարուստ մշակույթը և վիրավոր քաղաքի հոգևոր վերածննդի տեսլականը:

Հատկանշական է, որ դա իրականություն դարձավ 1997-ի աշնանը, երբ իշխանությունների կարճամիտ ու այսրոպեական քաղաքականությունը լրջորեն վտանգել էր Հայոց գիտությունների ակադեմիայի վաղվա օրը՝ կասկածի տակ առնելով նրա հետագա գոյության նպատակահարմարությունը: Այնուամենայնիվ, Ակադեմիան դիմագրավեց այդ քամիներին: Այսպես, 1997-ի կեսերից սկսեց գործել առաջին տարիներին Հնագիտության և ազգագրության ինստիտուտի մասնաճյուղ, իսկ 2002-ից ինքնուրույն ու մեր երկրում առայժմ միակ ակադեմիական ոչմայրաքաղաքային հումանիտար կառույցը՝ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը, որը ձեռնամուխ եղավ հայերենագիտության ընդհանուր համատեքստում Շիրակի և հարակից տարածքների պատմագիտական, հնագիտական ու ազգաբանական ուսումնասիրությանը՝ ձգտելով գիտական պատշաճ մակարդակով կատարված հետազոտություններով համալրել հայագիտության տարբեր ոլորտները՝ ի սկզբանե գիտակցելով, որ իրեն որոշակի դերակատարում է վերապահվում ոչ միայն տարածաշրջանի պատմամշակութային ժառանգության գիտական ուսումնասիրության բնագավառում, այլև այդ ժառանգությունը հանրությանը ներկայացնելու, այն պահպանելու ու քարոզելու, ինչպես նաև տեղում գիտական նոր կադրերի պատրաստման գործում:

Ստեղծման օրից կենտրոնի գործունեության առաջնահերթություններից է Շիրակի հնագիտական հուշարձանների ուսումնասիրությունը, որը ներառում է տարածքի հնագիտական հետախուզություն, նոր հնավայրերի հայտնաբերում, պեղումների իրականացում, պեղավայրերի թվագրում, չափագրումներ, հայտնաբերված հնագիտական նյութերի կամերալ ուսումնասիրություն, ցուցադրություն, ուսումնասիրված հնավայրերի տեսական և գործնական նշանակության գիտական հիմնավորում ու քարոզչություն, հայ և օտար աղբյուներում հիշատակվող Շիրակի տարածքի տարբեր ժամանակաշրջանների բնակավայրերի, ամրոցների, ճանապարհների տեղագրական ճշտումներն ու դրանց արդյունքների հրապարակում: 20 տարվա ընթացքում այս ուղղությամբ իրականացվել են երեք գիտական ծրագրեր: Դրանցից առաջինը վերաբերում էր Շիրակի անտիկ բնակավայրերին ու դամբարանադաշտերին (Բենիամին, Կարմրաքար, Առափի և այլն): Երկրորդ ծրագրով գիտականորեն հիմնավորվեց, որ Հայկաձոր գյուղի վարչական տարածքում՝ Ախուրյանի մեր ափին՝ Հոռոմոսի վանական համալիրի դիմաց ընկած հրվանդանի հնագիտական հետազոտության արդյունքում կենտրոնի հնագետների կողմից հայտնաբերված՝ իրար հաղորդակից ձեռակերտ ու բնական քարանձավներից բաղկացած բնակավայրը (միջնադարյան հզոր մշակութային շերտով հնավայր է) Անի մայրաքա-

դաքի օրգանական շարունակությունն է. ըստ էության, քաղաքի մի հատվածը, որի հանգամանալի ուսումնասիրությամբ նորովի մեկնաբանություն ստացան նրա ճարտարապետական լուծումների, շինարանական սկզբունքների (այդ թվում նաև ջրամատակարարման ու ֆիլտրացման համակարգերի առանձնահատկություններ-րի), հասարակ բնակչության կենցաղի ու մշակույթի բազմաթիվ և տարաբնույթ հարցեր: Երրորդ ծրագրի շրջանակներում ուսումնասիրվում են Ազատանի և Մեծ Սեպասարի հնավայրերը: Գիտականորեն արժևորվել է Մեծ Սեպասարի վաղբրոնզեդարյան տաճարական համալիրի տարածքում Հայաստանի առայժմ միակ վաղբրոնզեդարյան սրբարանի պեղումներով հայտնաբերված ծիսական առարկաների (գայլերի զոհաբերության ծեսի մնացորդներ և այլն) պաշտամունքային դերը հնդեվրոպական դիցաբանության ու հավատալիքների համատեքստում: Ճշտվել է պեղումներով հայտնաբերված կառույցների գործառական նշանակությունը: Հետագա պեղումները կհստակեցնեն համալիրի հատակագծային ամբողջական պատկերը, ձեռք կբերվեն նոր գտածոներ, որոնց ժամանակագրական սանդղակի ճշգրտումը կօգնի լիովին պարզելու հուշարձանի տիպաբանական աղերսներն այլ հնավայրերի հետ, էլ ավելի ամբողջական դարձնելու պատկերացումն այս վաղբրոնզեդարյան հնավայրի պատմամշակութային անգնահատելի արժեքի, պատմական այդ ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական կյանքի, հավատալիքների ու կենցաղի մեջ նրա տեղի և նշանակության մասին՝ նկատելի առաջքայլ ապահովելով մեր հայրենիքի վաղբրոնզեդարյան նյութական մշակույթի ուսումնասիրության բնագավառում:

Կատարվում է նաև Հայկաձորի տարածքում գտնվող ուրարտական շրջանի ամրոց-բնակավայրի հնագիտական ուսումնասիրությունը, որը կարևորվում է տարածքի մ. թ. ա. 1-ին հազարամյակի պատմության ու մշակույթի հիմնախնդիրների լուծման տեսակետից և Հայկաձորի քարանձավային բնակավայրի հետ վերջին շրջանում իր վրա է բևեռել նաև միջազգային արշավախմբերի ուշադրությունը:

2011 թ. սկսվեց Ազատանի մշակութային եռաշերտ հնագիտական հուշարձանի հետազոտությունը, որը խիստ բացառիկ է իր բաղկացուցիչ բոլոր մասերի լավ պահպանվածությամբ և հնարավորություն է ընձեռում նույն տեղում դիտարկել մ. թ. ա. XII դ. մինչ հելլենիստական ժամանակաշրջանի նյութական մշակույթն իր զարգացման մեջ: Ամրոցի և բնակավայրի տարբեր շերտերից հայտնաբերված նյութերի ուսումնասիրությունը եզակի հնարավորություններ է տալիս դիտարկելու ինչպես կրոնածիսական իրողությունների, այնպես էլ՝ հասարակական ու տնտեսական հարաբերությունների զարգացման ընթացքը վերոհիշյալ ժամանակահատվածում, այլև կարող է պատասխան տալ հոգևոր և նյութական մշակույթի հստակ թվագրման բազմաթիվ հարցերի:

Առաջիկա տարիներին ուշադրության կենտրոնում կլինի նաև երկու այլ նորահայտ հնագիտական հուշարձանների՝ Ջրաձորի վաղ բրոնզ-երկաթի լայն տարածման ժամանակաշրջանի ամրոց-բնակավայր-դամբարանադաշտ համալիր հնավայրի և Եղնաջուրի վաղբրոնզեդարյան նորահայտ բնակավայրի ուսումնասիրությունը: Ի դեպ, վերոնշյալ բոլոր հնավայրերը հայտնաբերվել են կենտրոնի հնագետների խմբի կողմից վերջին քսանամյակի ընթացքում: Կատարված ու ընթացող վերոնշյալ բոլոր հետազոտություններն ունեն արդյունավետ ընթացք. արդիական են, կարելի է ասել՝ նոր խոսք են արդի հայ հնագիտության բնագավառում և քննության առնված բազմաթիվ, այդ թվում՝ հարակից հարցերի գիտական հանգամանալի մեկնաբանումների շնորհիվ նաև հեռանկարային են:

Վերջին շրջանում, հատկապես վրացական պատմագիտության մեջ լուրջ հավակնություններ են դրսևորվում Ախուրյանի ավազանի երկրների բնակչության խուռիական կամ վրացական ծագման վարկածն ամեն կերպ հիմնավորելու ուղղությամբ (Թ. Գամկրելիձե և այլք): Ավելին, սրվում են Ախուրյանի ավազանի՝ վրացական ցեղերի նախահայրենիքի մաս կազմելու վերաբերյալ օտարալեզու մասնագիտական գրականության մեջ (Ի. Դյակոնով, Ի. Իվանով, Թ. Գամկրելիձե և այլք) շրջանառվող և ընդգծված հակահայ ուղղվածություն ունեցող վարկածները: Ուստի, կենտրոնում այս տարիների ընթացքում իրականացվող պատմագիտական քննությունը՝ սեպագիր սկզբնաղբյուրներում առկա հատկանունների գիտական ստուգաբանություններով, ավազանի երկրների բնակչության հնդեվրոպական հիմքերի բացահայտմամբ, նրա հավատալիքների ու սովորույթների հանգամանալի ուսումնասիրությամբ, հայ առասպելաբանության նոր խորքային շերտերի հայտնաբերմամբ՝ շատ կարևոր է ոչ միայն հայ ժողովրդի շիրակյան հատվածի մ. թ. ա. առաջին հազարամյակի էթնոլեզվական, հոգևոր-մշակութային, սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական պատմության ուսումնասիրությունն ամբողջացնելու տեսակետից, այլև՝ վերոնշյալ կեղծ վարկածների հակագիտական էությունը բացահայտելու, մեր հարևանների՝ տարածաշրջանի պատմությունը խեղաթյուրելու փորձերը չեզոքացնելու տեսակետից:

Ի մասնավորի առաջ է քաշվել գիտականորեն հիմնավորված այն համարձակ հարցադրումը, ըստ որի՝ հնդեվրոպական հասարակության եռադասյա կառուցվածքը ժառանգվել է նաև հայերի կողմից և կիրարկվել տարբեր բնագավառներում, այդ թվում՝ քաղաքաշինության մեջ, ինչի ապացույցն Ախուրյանի ավազանի տարածքում կառուցված Տիգնիս, Երազգավորս ու Շիրակական բնակավայրերն են՝ հիմնադրված համապատասխանաբար զինվորական, քրմական և բարիքներ արտադրող դասերի կողմից: Ձեռք բերված հիմնական արդյունքն այն դերի հստակեցումն է, որ ունեցել են հնդեվրոպական եռադասյա հասարակության սկզբունքներն ավազանի բնակչությունը ցեղամիությունների մեջ և Հայկական լեռնաշխարհի

տարբեր ցեղամիությունները միասնական պետական օրգանիզմի մեջ միավորելու գործում: Այս ամենը լավ հիմքեր են նախապատրաստում հետագայում ամբողջացնելու հայ ժողովրդի շիրակյան հատվածի մ. թ. ա. առաջին հազարամյակի էթնոլեզվական, հոգևոր-մշակութային, սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական պատմության ուսումնասիրությունը:

Մասամբ նույն նպատակն ունի Շիրակին հարակից պատմական տարածքների, մասնավորապես, Տայքի XVI–XIX դդ. պատմության մի շարք խնդիրների ուսումնասիրությունը վերջին հինգ տարիներին: Գիտական սպառիչ մեկնաբանություն են ստացել երկրամասի մի շարք հուշարձանների ազգային պատկանելության և վարչաժողովրդագրության, բնակավայրերի տեղագրության, այլակրոն հայերին առնչվող մի շարք արդիական, հաճախ վիճահարույց հարցեր: Արխիվային փաստաթղթերի (նաև՝ թուրքական, վրացական և այլ) վավերագրերի, վիճակագրական տվյալների, պատմագիտական, տեղագրական և ժողովրդագրական գրականության վերլուծության հիման վրա բացահայտվում են երկրամասում քաղքեդոնականության տարածման պատճառներն, ու ներկայացվում են նրա հայկական պատմական հուշարձանների վրացականացման գործում ներկայումս անընդհատ ակտիվացող վրաց-թուրքական համագործակցության հետևանքները:

Շիրակի նորագույն պատմությունը ևս բազմաթիվ նախատիպերի հաղթահարման ու կնճռոտ հարցերի նորովի մեկնաբանման կարիք ունի: Այս ընթացքում հրապարակ իջած բազմաթիվ հոդվածները, մի քանի մենագրություններն ու արխիվային փաստաթղթերի ստվարածավալ ժողովածուներն իրական ապացույցն են այն լուրջ աշխատանքի, որ գրեթե երկու տասնամյակ տարվում է կենտրոնում Ալեքսանդրապոլի գավառի ավելի քան 80-ամյա պատմության ամբողջացման ուղղությամբ: Կատարվեց բավականին արդյունավետ աշխատանք Ալեքսանդրապոլի գավառի պատմաժողովրդագրական պատկերի ու վերջինիս փոփոխությունների քննության ուղղությամբ, ինչն ամուր հիմք հանդիսացավ գավառի և նրա կենտրոն Ալեքսանդրապոլ քաղաքի XX դարասկզբի տասնամյակների պատմության մի շարք վիճահարույց հարցերի գիտական նորովի մեկնաբանության համար: Թափ առավ 1917–1918 թթ. ընթացքում գավառի տարածքում արևմտահայ գաղթականության տեղաբաշխման և գավառի էթնոժողովրդական իրավիճակի վրա գաղթերի թողած ազդեցության վերաբերյալ արխիվային նյութերի հավաքման և վերլուծության ուղղությամբ տարվող աշխատանքը: Ավարտին հասցվեց Ալեքսանդրապոլի գավառի XX դարասկզբի ժողովրդագրական իրավիճակին, գավառի հոգևոր և աշխարհիկ իշխանությունների, Ալեքսանդրապոլում գործող հասարակական կազմակերպությունների որբախնամ գործունեությանը վերաբերող արխիվային նյութերի հավաքումն ու վերլուծությունը:

Նորովի են մեկնաբանվել 1918 և 1920 թթ. Ալեքսանդրապոլի թուրքական ռազմակալման վերաբերյալ հայ պատմագիտության մեջ առկա որոշ հարցադրումներ, ուրվագծվել է գավառակենտրոնի՝ այդ շրջանի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքի, նաև՝ բարոյահոգեբանական իրավիճակի՝ վայրիվերումներով լի պատկերը:

Վերջին շրջանում սկիզբ է առել նաև տարածաշրջանի 1921–1940 թթ. քաղաքական պատմության ուսումնասիրությունը, որով նորովի անդրադարձ է կատարվում Ալեքսանդրապոլի (Լենինականի) գավառում խորհրդային իշխանության հաստատման ու ամրապնդման, տեղական խորհուրդների ընտրությունների, խորհրդային իշխանության մարմինների ստեղծման, գործունեության և այլ, հաճախ վիճահարույց հարցերին:

Շիրակին վերաբերող ազգագրական ուսումնասիրություններ կատարվում են վաղուց, և միայն վերջին երկու տասնամյակների ընթացքում է, որ կենտրոնի գործունեության շնորհիվ, նմանատիպ հետազոտությունների մի զգալի մասն իրականացվում է Գյումրիում: Կենտրոնի ստեղծումից հետո այստեղ արդեն կատարվել են ազգագրական բնույթի յոթ գիտական թեմաներ, որոնք վերաբերում են Շիրակի արհեստներին, տնայնագործությանը, դրանց տեղաբաշխմանը, որոշ ավանդական զբաղմունքների վերացմանը, նոր ժամանակներում դրանցից մի քանիսի վերականգնման անհրաժեշտությանը: Դրանցում մեծ ուշադրություն է դարձվել ավանդական և ժամանակակից արհեստների ու տնտեսական զբաղմունքների արդիական կիրառական հիմնախնդիրներին ու դրանց ներդրման հնարավորություններին, ինչն այսօր կարող է նպաստել մարզի բնակչության զբաղվածության հարցի լուծմանը: Հատուկ ուշադրություն է դարձվել քաղաքի կենսապահովման մշակույթի՝ բնակարանի և բնակարանային համալիրի, կահույքի, կարասու, հագուստի համալիրի, սննդի համակարգի առանձնահատկությունների ու դրանցում կատարված փոփոխությունների ուսումնասիրությանը, Շիրակի բնակչության տոնածիսական վարքի, բնակավայրերում գործող սրբատեղիների, ուխտագնացության ձևերի, դրանց ուղեկցող այլ երևույթների, ինչպես նաև մարզի տարածքում 1920–50-ական թվականների ժողովրդագրական գործընթացների, մասնավորապես դեպի արդյունաբերական Լենինական գյուղական բնակչության տեղաշարժի պատճառների ու հետևանքների քննությանը: Հետազոտվել են նաև հետաղետյան շրջանի ավանդական բանահյուսության ու ծիսատոնական համակարգերի կրած փոփոխությունները, կատարվել է "աղետի բանահյուսության"՝ իբրև սթրեսներ ապրած անձանց հոգեբանական պաշտպանական մեխանիզմի դրսևորումների էթնոհոգեբանական քննություն՝ ազգաբանական իրողությունները՝ ավանդակարգերը, ծեսերն ու տոները՝ դիտելով որպես սեռատարիքային և սոցիալական տարբեր խմբերի պատկանող

աղետյալների հոգեկարգավորմանը օժանդակող անհրաժեշտ պաշտպանական մեխանիզմներ:

Այս հիմքերի վրա ներկայումս կենտրոնում արդյունավետորեն իրականացվում է Ալեքսանդրապոլ–Լենինական–Գյումրի պատմազգագրական ծավալուն հետազոտության երկրորդ մասը՝ նվիրված քաղաքի լենինականյան ժամանակահատվածի ազգագրական դիմագծի ամբողջացմանը, արծարծվում են տնտեսական կյանքի, հայրենադարձության նշանակության ու ժողովրդագրական տեղաշարժերի, քաղաքի արդյունաբերականացման, քաղաքային արհեստների ու տնտեսական զբաղմունքների արդի փոխակերպումների, գյուղական բնակչության դեպի քաղաք միգրացիայի, տարածաշրջանի XX դարի երկրորդ կեսի ժողովրդագրական իրադրության, անցկացված մարդահամարների, բնակչության սոցիալական կազմի փոփոխությունների, բնակչության թվի շարժընթացի, զբաղվածության, քաղաքային մշակույթի, արվեստի և այլ հարցեր: Սկիզբ է առել ժողովրդական ծեսերի ու տոների ժամանակակից փոխակերպումների ուսումնասիրություն՝ դրանց պահպանման և թարմացման արդյունավետ լուծումների առաջադրման նպատակով, հրատարակվում է կենցաղավարող տոնածիսական արարողություններին նվիրված գիտաճանաչողական բնույթի գրականություն, կազմակերպվում են մարզի տարածքում նպատակային ազգագրական գիտարշավներ՝ բնակավայրերի ազգագրական ատլասն առաջիկա հինգ տարիների ընթացքում կազմելու և հրատարակելու համար:

Այս համատեքստում առանձնակի են արժևորվում նաև Կենտրոնի ազգագրագետների ջանքերով (Գյումրու քաղաքապետարանի և Մշակույթի նախարարության ֆինանսական աջակցությամբ) Գյումրիում արդեն ավանդական "Հացի տոն"-երի, ազգային խոհանոցի ցուցադրանքների, Տյառնընդառաջի, Սբ. Սարգսի, Վարդավառի ու Սբ. Զատիկի համաքաղաքային տոնահանդեսների կազմակերպումը՝ որպես տոնածիսական արարողությունների պահպանման և քարոզման արդյունավետ միջոցների:

Տարածաշրջանի ազգագրական պատկերի ձևավորման առումով կարևոր նշանակություն ունի նաև Շիրակի ժողովրդական երգարվեստի գիտական արժևորումը, որ կենտրոնում սկիզբ է առել 1998 թվականից: Այս ընթացքում ծավալուն աշխատանք է կատարվել ժողովրդական ու ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտության արդի խնդիրների և զարգացման միտումների մեկնաբանման ուղղությամբ, հավաքվել, քարտեզագրվել ու համակարգվել են մոտ 300 երաժշտական-բանահյուսական նմուշներ, որոնց մի մասն արդեն հրապարակվել է:

Իրականացվել է գուսան Շահենի՝ XX դարակեսին Լենինականում ստեղծած աշուղական դպրոցի ներկայացուցիչների վաստակի ըստ ամենայնի արժևորում, ընթացքի մեջ է Գյումրիում և գյուղական բնակավայրերում ժողովրդական երգի ու պարերի արդի կատարումների փոխակերպումների քննությունը, Ալեքսանդրապո-

լում տարածված պարերի գրառված 100 նմուշների համահավաք անվանացանկի կազմումն ու աշխատանքը դրանց տիպաբանական, ժանրային-ոճական բնութագրիչների բացահայտման ուղղությամբ: Միջազգային համագործակցության շրջանակներում ավարտման փուլին է հասցվել Հաագայի պատմական արդարության և հանդուրժողականության ինստիտուտի նախաձեռնությամբ կատարվող "Աշուղական ավանդույթներ. Կարս–Ալեքսանդրապոլ" համատեղ ծրագրի մեր մասը, որ նվիրված է XIX և XX դդ. սկզբին երկու քաղաքների երաժշտական կյանքում նշանակալի դեր ունեցած հայ և թուրք աշուղների ստեղծագործական ժառանգության համեմատական քննությանը:

Ներկայումս առանձնապես կարևորվում է այդ ժառանգության գնահատումն ու արժևորումը՝ հատկապես մերձավորարևելյան և կովկասյան համարժեք մշակույթների համատեքստում: Աշուղական երգարվեստի ուսումնասիրության արդի խնդիրների մեջ միջմշակութային երևույթներին վերաբերող սուր հակասություններ կան, երբեմն նաև՝ միտումնավոր կանխակալ մոտեցումներ, որոնք այսօր հաճախադեպ են վրացական, հատկապես, թուրքական և ադրբեջանական աղբյուրներում ու մեկնաբանություններում: Հետևաբար հիմնովին արդարացված ու անհրաժեշտ ենք համարում նմանօրինակ մի շարք խեղաթյուրումների բացահայտման և քննադատության ուղղությամբ կենտրոնի երաժշտագետների ջանքերը:

Գյումրու մշակութային և ազգագրական ուրույն դիմապատկերի կարևոր շտրիխներից մեկը նրա խոսվածքն է՝ իր արդի առանձնահատկություններով, որի համակողմանի քննությունը սկիզբ է առել Կենտրոնում միայն վերջերս: Ավարտվել են նախապատրաստական աշխատանքները նաև գիտական մեկ այլ թեմայի ("Շուշի–Ալեքսանդրապոլ. քաղաքային մշակույթի աղերսներ") ուսումնասիրությունը սկսելու համար: Ելակետն այն է, որ Անդրկովկասի ամենահայեցի, հասարակական ու կրթամշակութային ինքնատիպ կյանքով ապրած այս երկու հայաշատ կենտրոններն իրենց պատմական դերակատարությամբ ու մեր ժողովրդի կյանքում ունեցած նշանակությամբ, իրենց ավանդասիրությամբ և քաղաքային մշակույթով բավական ընդհանրություններ ու աղերսներ պետք է ունենան, որոնք կարոտ են հիմնավոր գիտական մեկնաբանությունների: 2012-ին Կենտրոնի գիտաշխատողների՝ Արցախ գործուղումներով կապեր են հաստատվել Ստեփանակերտի համալսարանի հայագիտական կենտրոնի, երկրագիտական թանգարանի, Շուշիի պատմության թանգարանի հետ, մշակվել է համատեղ ուսումնասիրության ծրագիր, հաստատվել է փոխադարձ այցելությունների ժամանակացույց: Ընթացքի մեջ են նաև տարբեր լեզվամշակույթներում օրորոցայինների՝ որպես բանահյուսական տեքստերի զուգադիր քննությունը, Մեծ եղեռնը վերապրածների Շիրակում ապրող սերունդների հուշագրության ստեղծումը: Արդեն հրատարակվել են հուշագրության հինգ պրակներ, պատրաստվել մի քանի տեսաֆիլմեր:

Թվարկած ոլորտներում իրականացվող հետազոտություններից յուրաքանչյուրը յուրովի արդիական է և հեռանկարային: Այսպես, Մեծ Սեպասարի հնագիտական հուշարձանի ուսումնասիրությունը նոր եզրեր է ենթադրում տարածքի վաղբրոնզեդարյան աշխարհի պատկերում, Շիրակի և Տայքի պատմաժողովրդագրական հետազոտությունները նոր պարզաբանումներ են խոստանում Շիրակի և հարակից տարածքների XIX դ. պատմության մեջ, իսկ Ալեքսանդրապոլ–Լենինական–Գյումրի քաղաքային կենցաղի ուսումնասիրությունը նոր էջեր է ակնկալում հայագիտության մեջ դեռ քիչ զարգացած ուրբանիստական մարդաբանության ասպարեզում:

Կենտրոնի աշխատանքի կարևոր բաղադրամասերից մեկը Գյումրիում պարբերաբար անցկացվող "Շիրակի պատմամշակութային ժառանգությունը" խորագրով հանրապետական, հիմա արդեն՝ միջազգային գիտաժողովներն են, որոնք գումարվելով 2–3 տարին մեկ անգամ՝ նպատակ են հետապնդում հայտածել Հայաստանի հյուսիսի, մասնավորաբար պատմական Շիրակի հնագիտական, պատմագիտական ազգաբանական ու բանագիտական ուսումնասիրության ժամանակակից մակարդակը, առաջադրել և քննարկել ուսումնասիրվող վիճահարույց իրողությունների նորովի գիտական մեկնաբանություններ, հնարավորության սահմաններում ուրվագծել հայագիտության ընդհանուր համատեքստում Շիրակի հարուստ ազգագրության, բանահյուսության, պատմության, արհեստների ու արվեստների ուսումնասիրության հետագա ընթացքը և առաջնահերթությունները XXI դ. առաջին քառորդին: Դրանք սկզբից ևեթ եղան և շարունակում են լինել մեծամասշտաբ միջոցառումներ ոչ միայն Գյումրու, այլև՝ հանրապետության գիտական ու մշակութային կյանքում, ավանդաբար հավաքում են ունկնդիրների շատ մեծ լսարան (Գյումրու և մարզի գիտական մտավորականություն, ուսուցչություն, բուհերի հայագիտական ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմ և ուսանողություն), ունենում են թեմատիկ լայն շրջանակներ և մասնակիցների (նաև արտերկրից) հեղինակավոր ու ներկայացուցչական կազմ (Իտալիա, Ֆրանսիա, Հունաստան, ԱՄՆ, Ռուսաստանի Դաշնություն, Ճապոնիա, Վրաստան, Գերմանիա, Լեհաստան, Լիբանան, Ղազախստան, Ուկրաինա և այլն):

Այս առումով հատկանշական էին 2013-ի հոկտեմբերին Գյումրիում "Պատմամշակութային ժառանգություն և արդիականություն" միջազգային գիտաժողովը՝ մեր հանրապետության շուրջ ութսուն և արտերկրի ավելի քան հիսուն ազգագրագետների, բանագետների, պատմաբանների ու հնագետների մասնակցությամբ, նաև՝ 2016-ի սեպտեմբերի "Շիրակի պատմամշակութային ժառանգություն. հայագիտության արդի հիմնահարցեր" իններորդ միջազգային գիտաժողովը՝ հայաստանյան ութսունհինգ և տասներկու երկրների երկու տասնյակ մասնակիցներով:

Ի դեպ, կենտրոնը 2011 թ. յուրովի նշեց Անիի՝ հայ Բագրատունիների մայրաքաղաք հռչակման 1050-ամյակը՝ սեպտեմբերի 10–12-ին սրբազան ուխտագնացություն կատարելով հայոց տիեզերական մայրաքաղաք, որտեղ Մայր տաճարի՝ Սբ. Աստվածածին կաթողիկե եկեղեցու վեհ կամարների ներքո Տերունական աղոթքի օրհնաբուխ խորհրդով սկսվեցին աննախադեպ գիտական ընթերցումներ՝ նվիրված Անիի պատմությանն ու մշակութային կյանքին, արհեստներին, ճարտարապետությանը, կերպարվեստին, երաժշտությանը: Եվ, որ անչափ խորհրդանշական է, կենտրոնի գիտաշխատողների զեկույցներին գրեթե երկու ժամ շարունակ համակ ուշադրությամբ ու սրբազան դողով իրենց համար անսպասելիորեն մասնակից և ունկնդիր եղան հարյուրավոր հայորդիներ (կանադահայեր, լիբանանահայեր, սիրիահայեր) ու օտարներ, նույնիսկ բազմաթիվ քրդեր և թուրքեր: Տաճարում ասեղ գցելու տեղ չկար: Դա անպատմելի ու անկրկնելի պահ էր, հայ ոգու հաղթության ու հավերժության առհավատչյան. բացառիկ և աննախադեպ երևույթ՝ ինչպես կենտրոնի կյանքում, այնպես էլ՝ Անիի Մայր տաճարում երբևէ տեղի ունեցած հիշատակի խնկարկումներում:

Կենտրոնում սկզբից ևեթ կարևորվեց տպագիր խոսք ունենալու անհրաժեշտությունը: Որոշվեց տարին մեկ հրատարակել "Գիտական աշխատություններ" հոդվածների ժողովածու: Այսօր հրապարակի վրա են հանրապետության գիտական շրջանակներում բարի համբավ վայելող այդ ժողովածուի արդեն 20 հատորներ, որոնցում Շիրակի պատմությանը, հնագիտությանը, ազգագրությանն ու բանահյուսությանը նվիրված շուրջ 530 հոդվածի, հրապարակումների և հաղորդումների գերակշիռ մասը հեղինակել են Կենտրոնի գիտաշխատողները: Ի դեպ, այս ժողովածուն, որ ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի կողմից դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների հրատարակման համար ընդունելի պարբերականների շարքում, հանրապետության հայագիտական շրջաններում հեղինակություն վայելող պարբերական է, որի բոլոր հատորները թվայնացված են և մեր մյուս բոլոր հրապարակումների նման՝ տեղավորված կենտրոնի կայքէջում: Նպատակ հետապնդելով խթանել ավարտված թեմաների ամբողջական տպագրությունը՝ 2010-ին Կենտրոնում ստեղծվեց նաև "Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ" մատենաշարը, որի երկու պրակներն արդեն լույս են տեսել: Երկու տասնամյակների ընթացքում հրատարակվել են նաև քսանից ավելի մենագրություններ, արխիվային նյութերի ու փաստաթղթերի ստվարածավալ ժողովածուներ, ինչպես նաև՝ "Շիրակի պատմամշակութային ժառանգությունը" հանրապետական կամ միջազգային գիտաժողովների նյութերի ինը հատորներ: Կենտրոնի 18 գիտաշխատողի հրատարակումները տարեկան միջին հաշվով կազմում են մինչև երեսուն գիտական հոդված, չորս մենագրություն, միջազգային և հանրապետական գիտաժողովների երկու տասնյակի հասնող զեկույց-

ներ: Վերջին շրջանում Բեյրութի Հայկազյան համալսարանի հետ հաստատված բավականին ամուր կապերի շնորհիվ կտրուկ աճել է կենտրոնի գիտաշխատողների հրատարակումների թիվը "Հայկազեան Հայագիտական հանդէս"-ում: Քսան տարիների ընթացքում գիտակազմը ընդհանուր առմամբ հրատարակել է շուրջ 500 հոդված և հաղորդում՝ որից ավելի քան 70-ը արտերկրում՝ ֆրանսիական, գերմանական, ռուսական, բուլղարական, լեհական և այլ գրախոսվող հանդեսներում և ժողովածուներում: Ապահովված է արտերկիր ուղարկվող աշխատանքների անգլերեն, ֆրանսերեն և ռուսերեն լեզուներով բարձրորակ թարգմանական ծառայություն՝ կենտրոնի օտար լեզուների լիարժեք իմացություն ունեցող գիտաշխատողների ուժերով: Ի դեպ, համոզված եմ, որ կենտրոնի ոչ մեծ գիտակազմի աշխատանքի արդյունավետության հիմքում ոչ միայն գիտական աստիճան ունեցողների բարձր տոկոսն է՝ 84, այլև գործը պատվախնդրորեն և պատասխանատվությամբ կատարելու ընդգծված ցանկությունը: 1997-ին, երբ ստեղծվում էր կենտրոնը, ուներ ընդամենը 4 գիտության թեկնածուներ: Այսօր գիտության դոկտորներ են 2-ը, գիտության թեկնածուներ՝ 13-ը, որոնցից 4-ն աշխատում են դոկտորական ատենախոսությունների վրա: Անհրաժեշտ ենք համարում մոտ ապագայում կենտրոնում իրականացվող թեմաների քանակի ավելացում, ինչը հնարավոր կդարձնի հետազոտող խմբերը համալրել նոր երիտասարդ կադրերով: Վերջիններիս ընտրության բավականին լայն հնարավորություն ունի կենտրոնը՝ առաջին հերթին ի դեմս Շիրակի պետական համալսարանի (նախկին մանկավարժականի) հայագիտական ամբիոնների մագիստրոսական աստիճան ունեցող մի շարք խոստումնալից և հեռանկարային շրջանավարտների: Ներկայումս կենտրոնը բուհի հետ մշակում է կադրերի նպատակային պատրաստման մեխանիզմներ, նախատեսվում է համատեղ ստեղծել հնագիտական և ազգագրական կամերալ ուսումնասիրությունների լաբորատորիա, մշակել ու համատեղ գործարկել հայագիտական բնույթի մագիստրոսական կրթության ուսումնական ծրագրեր:

Հետազոտական խմբերի գիտական գործունեության կարևոր տարրեր են գիտական ընթերցումներն ու սեմինարները, որոնք անցկացվում են կենտրոնում իրականացվող հայագիտական թեմատիկային համապատասխան, անցնում են սովորաբար ակտիվ քննարկումների ոգով: Գրեթե միշտ մասնակցում են նաև մագիստրոսներ բուհերի հայագիտական ամբիոններից, ինչպես նաև՝ քաղաքի մտավորականության շատ ներկայացուցիչներ: Հաճախ սեմինարները կազմակերպվում են ուսումնասիրվող հնավայրերի տարածքում, պատմական հուշարձանների մոտ, թանգարաններում, գրադարաններում, դպրոցներում, պետհամալսարանում: Դրանց վերաբերյալ տեղեկատվությունը մշտապես կարելի է գտնել կենտրոնի կայքէջում և ֆեյսբուքյան էջում: Հայրենագիտության դասեր մարզի դպրոցներում, հայագիտական զրույցներ ազգային բանակի զորամասերում, վերջապես Գիտության պետա-

կան կոմիտեի ֆինանսական աջակցությամբ երիտասարդ գիտնականի ամառային դպրոցների կազմակերպում՝ հանրապետության ակադեմիական և բուհական համակարգի մագիստրոսների, հայցորդների, ասպիրանտների ու ուսուցիչների համար՝ կենտրոնի գիտաշխատողների և հրավիրված դասախոսների ուժերով, ակտիվ մասնակցություն հանրապետության գիտական կյանքին, անցնող տարիների հետ խորացող համագործակցություն բազմաթիվ ակադեմիական ու բուհական հայագիտական կառույցների, թանգարանների, Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի թեմի առաջնորդարանի, արտասահմանյան մի շարք կենտրոնների և հնագիտական արշավախմբերի հետ, արտերկրում հրատարակվող աշխատությունների քանակի աճ, համատեղ ծրագրերի իրականացման պայմանավորությունների ձեռքբերում. այսպիսին են կենտրոնի գործունեության առաջնահերթությունները ներկայում: Դրանց մեջ առանձնակի կարելի է նշել Գյումրու քաղաքապետարանի հետ արդյունավետ համագործակցությունը, որը վերջին տարիներին դրսևորվում է համատեղ միջոցառումների կազմակերպման, միջազգային գիտաժողովների, ավանդական ազգագրական տոների պատվերների ձևով, ինչը մեր գիտական արտադրանքի առևտրայնացման իրական հնարավորություններից է: Այսպես, քաղաքապետարանի հետ նախնական պայմանավորվածություն ենք ձեռք բերել մեր քաղաքն Ալեքսանդրապոլ անվանելու 180-ամյակի կապակցությամբ պատկերազարդ գիրք-ալբոմի ստեղծման նպատակով: Կենտրոնի գիտական արտադրանքի առևտրայնացման ուղիներ գտնելու առումով փնտրում ենք նաև այլ շահագրգիռ կազմակերպություններ, մշակում ենք առաջարկություններ համատեղ ծրագրերի իրականացման կամ պատվերներ ստանալու նպատակով:

Իհարկե, կենտրոնի աշխատանքներում նաև բացթողումներ կան. առ այսօր մտահոգիչ է մնում բարձր ազդեցության գործակցով արտասահմանյան հանդեսներում հրատարակվող աշխատանքների ցածր թիվը, լաբորատոր պայմանների բացակայության պատճառով հնագիտական գտածոների վերականգնողական աշխատանքների իրականացում այլ հիմնարկություններում, ցածր աշխատավարձերը, արտաբյուջետային ֆինանսների կուտակման դեռևս անբավարար վիճակը, հետևաբար հետազոտվող թեմաների ներդրման, ուրեմն նաև նոր կադրերով համալրման դժվարություններ: Այնուհանդերձ կենտրոնի բնականոն աշխատանքը խաթարող ամենացավոտ հարցը՝ աշխատանքային գոնե տարրական պայմաններից շուրջ 18 տարի զրկված լինելը, Ակադեմիայի Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ջանքերով ի վերջո լուծում ստացավ, ինչի համար, օգտվելով ստեղծված հնարավորությունից, ուզում եմ կենտրոնի աշխատակիցների անունից սրտանց շնորհակալություն հայտնել նաև Գիտությունների ազգային ակադեմիայի երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի տնօրինությանն ու ողջ հանրույթին՝ մեզ իրենց նոր շինության

մեջ հարկաբաժնով, աշխատանքային հիանալի պայմաններով ապահովելու ու հոգատար վերաբերմունքի համար և հուսալ, որ սարերի հետևում չեն համատեղ հետազոտական ծրագրերի հղացման և իրականացման հնարավորությունները:

Շիրակը, Հայաստանի պատմական այլ գավառների նման, հոգևոր և նյութական մշակույթի անսպառ գանձեր ունի՝ հնագիտական ու պատմական մեծարժեք հուշարձաններ և անհատակ անցյալ, դարերով ձևավորված ազգագրական գուներանգների ինքնատիպ գամմա ու անկրկնելի բանահյուսություն, անզուգական կենցաղ և դարերի խորքից եկող ավանդույթներ, զարմանահրաշ ճարտարապետություն ու նկարչություն, բազմազան արհեստներ և զբաղմունքներ, ժողովրդական մեծարվեստ երգ ու երաժշտություն և մեր բազմադարյա մշակույթի այլ ձեռակերտ գոհարներ: Այլ խոսքով՝ պատմամշակութային ծովածավալ ժառանգություն, որի կրողն ու փոխանցողը մեր ժամանակակիցն է: Նրան է բախտ վիճակվել շարունակել այդ գանձերի մերօրյա ուսումնասիրությունը: Այս ազգաշահ գործին է լծված նաև 1997-ից Գյումրում գործող ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը՝ իր հավակնոտ ու համարձակ գիտական ծրագրերով, նաև՝ իր մեծ ու փոքր հոգսերով:

Հաստատություն, որն ստեղծվեց Աղետից ստացած վերքերը դեռ լիովին չդարմանած, բայց և անսպառ սրամիտ ու տոկուն ժողովուրդ ունեցող հայրաքաղաքում, և շարունակում է հայրենական գիտության տաճարի իր համեստ սպասավորությունը՝ իր ուժերի հանգույն հարստացնելով գիտական նվաճումների հայրենական գանձարանը, իր նպաստը բերելով ազգային ոգու ու ավանդույթների պահպանմանն ու հարատևմանը:

ՍԵՐԳՈ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ